



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

11.08.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/20

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 10.07.2017թ. թիվ 04/27-1/12580-17 գրությամբ «Շելդա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով (այսուհետ՝ նաև պաշտոնական ընթացակարգ) ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 27.06.2017թ. թիվ ԴՎԱ/1997 գրության հիման վրա, 10.07.2017թ. թիվ 04/27-1/12580-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Շելդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով պաշտոնական ընթացակարգ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը 27.06.2017թ. թիվ ԴՎԱ/1997 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/28» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի 5-րդ չափաբաժնով «Շելդա» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

«Շելդա» ՍՊԸ-ին (armeps.am) համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է (3) երեք աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

«Շելդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրի քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 71-րդ կետը՝ որոշեց կասեցնել նիստը և հարցում ուղարկել ՀՀ ԿԱ ՊԵ կոմիտե՝ ներկայացված պայմանագրի իսկությունը ճշտելու համար:

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի եզրակացության հիման վրա գնահատող հանձնաժողովը մերժել է «Շելդա» ՍՊԸ-ի հայտը, քանի որ պայմանագրի իսկությունը չի համապատասխանում ներկայացվածին:

Միաժամանակ տեղեկացնում են, որ ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 48-րդ կետի համաձայն՝ ՀՀ ԿԱ ՊԵ կոմիտեից ստացված եզրակացության համաձայն՝ «Շելդա» ՍՊԸ-ն ունի նաև հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Տիգրան Բաղդասարյանը:

3. «Շելդա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

Խորհուրդը դիմել է «Շելդա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2017թ. թիվ 04/27-1/12580-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը՝ պատշաճ ծանուցված լինելով Խորհրդում կայանալիք նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԷՍ-2017/20 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 10.07.2017թ. թիվ 04/27-1/12580-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի 27.06.2017թ. թիվ ԴՎԱ/1997 գրությունը և կից փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/28» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-1/6» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 13.03.2017թ. նիստի թիվ 4, 04.04.2017թ. նիստի թիվ 4, 05.05.2017թ. նիստի թիվ 5 և 23.05.2017թ. նիստի թիվ 6 արձանագրությունները, «Շելլա» ՍՊԸ և «Օստ-Շին» ՍՊԸ կոնսորցիումի կողմից Ընթացակարգին ներկայացված մասնակցության հայտի պատճենը, «Շելլա» ՍՊԸ-ի և «Լիկա-1» ՍՊԸ-ի միջև 20.01.2016թ. կնքված ՈԱՊ-1 մատակարարման պայմանագիրը և «Լիկա-1» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 22.11.2016թ. «Շելլա» ՍՊԸ-ին տրված տեղեկանքը, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կատարված հարցումը և վերջինիս կողմից 27.04.2017թ. տրված եզրակացությունը, Պատվիրատուի կարծիքը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/12-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/28» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) մասնակցության հայտ է ներկայացրել «Շելլա» ՍՊԸ և «Օստ-Շին» ՍՊԸ կոնսորցիումը (այսուհետ՝ նաև Կոնսորցիում):

«Շելլա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի միջև 25.11.2016թ. կնքված ՈՇԵ/ՕՍ-1 համատեղ գործունեության պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ կողմերը պարտավորվում են ներդնել հետևյալ ավանդները (հրավերով սահմանված որակավորման չափանիշներին համապատասխանությունը). Գործընկեր 1-ը (տվյալ դեպքում՝ «Շելլա» ՍՊԸ-ն) որպես ավանդ ներդնում է՝

ա) մասնագիտական փորձառություն,

բ) տեխնիկական միջոցներ,

գ) աշխատանայի ռեսուրսներ:

Հանձնաժողովի 29.03.2017թ. նիստի արձանագրության 4.1 կետով որոշել է «Շելդա» ՍՊԸ-ին ներկայացրած գնային առաջարկների հիման վրա ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից՝ 5-րդ չափաբաժնի մասով՝ առաջարկելով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, ինչպես նաև հայտի N 3.1 հավելվածով՝ հրավերով սահմանված մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է մսամթերքի և մսի սննդային ենթամթերքների մատակարարման պայմանագիր, որի ընդհանուր արժեքը կազմել է 37.097.540 ՀՀ դրամ, և պարտավորվել է նույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Կոնսորցիումի կողմից որպես մասնագիտական փորձառության չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացվել է «Շելդա» ՍՊԸ-ի և «Լիկա-1» ՍՊԸ-ի միջև 20.01.2016թ. կնքված ՈԱՊ-1 մատակարարման պայմանագիրը, որի ընդհանուր գինը կազմում է 37.097.540 ՀՀ դրամ, իսկ ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել 11.11.2016թ.:

Նշված պայմանագրի 10. 1 կետով սահմանվել է, որ նույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

«Շելդա» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու հայտով ներկայացրել է նաև «Լիկա-1» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 22.11.2016թ. «Շելդա» ՍՊԸ-ին տրված տեղեկանքը, առ այն, որ «Շելդա» ՍՊԸ-ի կողմից բարեխղճորեն և պայմանագրով նախատեսված ժամկետներում իրակացվել են 20.01.2016թ. կնքված թիվ ԱՊ-1 պայմանագրով նախատեսված բոլոր մատակարարումները՝ 37.097.540 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Հանձնաժողովի 29.03.2017թ. նիստի արձանագրության 4.3 կետով որոշել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ նաև Կոմիտե) հարցում ներկայացնել

առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Հանձնաժողովը 29.03.2017թ. Կոմիտեին ուղարկել է հարցում՝ խնդրելով տարամադրել՝ «Շելդա» ՍՊԸ-ի և «Օստ-Շին» ՍՊԸ-ի՝ 12.03.2017թ. դրությամբ ՀՀ կառավարության 10.02.2011թ. որոշմամբ հաստատված «Գնումների կազմակերպման կարգի» (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի 1-ին մասով նախատեսված տվյալների վերաբերյալ եզրակացություն:

Կոմիտեի կողմից 31.03.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Շելդա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 74.304 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց պարտավորություն:

Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 71-րդ կետը, 05.04.2017թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում է ներկայացրել «Շելդա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ որպես մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշը հիմնավորող՝ նմանատիպ պայմանագրի և դրա վերաբերյալ տրված պատշաճ կատարման տեղեկանքի համապատասխանությունը ստուգելու նպատակով:

Կոմիտեի կողմից 13.04.2017թ. Պատվիրատուին են տրամադրվել 20.01.2016-11.11.2016թթ. ընկած ժամանակահատվածում «Շելդա» ՍՊԸ-ի կողմից «Լիկա 1» ՍՊԸ-ին իրականացված մատակարարումների վերաբերյալ հարկային հաշիվների պատճենները:

Հանձնաժողովը՝

- 04.04.2017թ. կայացած նիստում արձանագրել է, որ «Շելդա» ՍՊԸ-ի հայտով ներկայացված նմանատիպ պայմանագրի և հաշիվ-ապրանքագրերի գումարները չեն համապատասխանում, ինչպես նաև ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված ապրանքի ձևը հստակ չէ և պարունակում է այլընտրանքային մեկնաբանություն: Հանձնաժողովը գտել է, որ անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում նշված ձևը:

- 14.04.2017թ. կայացած նիստում արձանագրել է, որ «Շելդա» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չի շտկվել և որոշում է ընդունել մերժել Ընկերության հայտը:

- 02.05.2017թ. կայացած նիստի արձանագրությամբ Ընկերության հայտը մերժելու հիմք նշել է նաև ներկայացված մասնագիտական փորձառությունը հավաստող փաստաթուղթը (պայմանագիրը) և դրա վերաբերյալ տրված պատշաճ կատարման մասին տեղեկանքը չհամապատասխանելը՝ հիմք ընդունելով Կոմիտեի կողմից 27.04.2017թ. տրամադրված եզրակացությունը:

- արձանագրել է նաև, որ ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետով նախատեսված եզրակացության համաձայն՝ «Շելդա» ՍՊԸ-ն ունի նաև հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչը ևս հիմք է հանդիսացել Ընկերության հայտը մերժելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

- 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

• 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

• 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 52-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

• 65-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող

երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

- 65-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը, որպես նույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ-ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

- 71-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

- 1) տվյալ մասնակցի հայտը մերժվում է.

- 2) մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Հրավերի՝

• 7.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող նույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղն զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ **r.mardoyan@mil.am**, է ուղարկում նույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

• 7.5 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի հանձնաժողովի հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած Մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

• 7.6 կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն նույն հրավերի 7.5 կետի 2-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով Պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան եզրակացություն: Նույն կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության

կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտենից եզրակացության չստացման դեպքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում Մասնակցի ներկայացրած հայտարարությունը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունենալու մասով, որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ Մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

• 8.1.2 կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ նույն հրավերով նախատեսված փաստաթղթերի և նույն հրավերի 4.3 կետի «դ» ենթակետով նախատեսված փաստաթղթերի, գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած Մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

• 8.1.3 կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած Մասնակցին:

• II Մասով նախատեսված հայտը պատրաստելու Հրահանգի 3.1 կետի «բ» ենթակետի համաձայն՝ նույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և նույն հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին

r.mardoyan@mil.am է ուղարկում նույն հրավերի 5-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է նախկինում՝ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում, պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի պատճենը, ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

Այսպիսով Խորհուրդն արձանագրում է, որ Կոմիտեի կողմից 31.03.2017թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «Շելդա» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 74.304 ՀՀ դրամ գումարի չափով ժամկետանց պարտավորություն:

Խորհուրդն արձանագրում է, որ 20.01.2016-11.11.2016թթ. ընկած ժամանակահատվածում՝ ըստ Կոմիտեի կողմից տրված եզրակացության, ՈԱՊ-1 պայմանագրի շրջանակներում «Շելդա» ՍՊԸ-ի կողմից «Լիկա 1» ՍՊԸ-ին իրականացվել է 36.266.859 ՀՀ դրամի մատակարարում՝ պայմանագրի ընդհանուր գնից՝ 37.097.540 ՀՀ դրամ գումարից 830.681 ՀՀ դրամ գումարով պակաս, հետևաբար Խորհուրդը գտնում է, որ նշված պայմանագիրը չի համարվում որպես Հրավերով պահանջված նախկինում պատշաճ իրականացված նմանատիպ պայմանագիր, իսկ «Լիկա-1» ՍՊԸ-ի տնօրենի կողմից «Շելդա» ՍՊԸ-ին տրված տեղեկանքը՝ Ընկերության կողմից Պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող փաստաթուղթ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությամբ, հայտնելով և հավաստելով այն մասին, որ հայտը ներկայացվելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, ինչպես նաև հայտի N 3.1 հավելվածով՝ հրավերով սահմանված մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնելով և հավաստելով, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է մսամթերքի և մսի սննդային ենթամթերքների մատակարարման պայմանագիր, որի ընդհանուր արժեքը կազմել է 37 097 540 ՀՀ դրամ՝ ներկայացրել է կեղծ տվյալ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Շելդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Շելդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը


Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2017թ. թիվ 04/27-1/12580-17 գրությամբ «Շելդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝**



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ